

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրլի, կէս տարվանը 6 բուր. Առանձին համարները 7 կոպէկով. Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ. Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ». Կամ Tiflis. Rédaction «Mschak». Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից) Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով. Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ. Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ի Բ Գ Ի Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Շ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Վ Ո Ւ Մ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՒԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 բուրլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., հինգ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ., ամսական 1 բուրլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՌՄԲԱԳՐԱՍԱՆԻ:

Օտարաբարդարացիները պէտք է դիմեն հետևեալ հասցեով՝ Тифлисъ. Редакція «Мшакъ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Արդարութիւնը և բռնի վկայութիւնները.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէջօր. Միշտ մի և նոյն էրգը, Նամակ Ղաբայից, Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Մարտաբեյ. Եղիպտոս. Նամակ Թիբեթից.—ՀԵՌԱՎԻՊՆԵՐ.—ԲՈՐՍՍ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Ազգի պահպանում:

ԱՐԻԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲՈՆԻ ՎԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Նորերս վեհափայլի նահանգական դատարանում մինչևանաւոր դէպք տեղի ունեցաւ, որը դրաւ էլ թէ՛ Ռուսաց մամուլի և թէ՛ դատաստանական աշխարհի ուշադրութիւնը: Անհետացել էր մի գիւղացի, տեղական ոստիկանութիւնը կասկածելով, որ նրան սպանել են, կարանաւորել էր երեք գիւղացի, որոնք խոստովանել էին, թէ՛ արարել, իւրանք են սպանել անհետացած գիւղացուն և դիակը գցել են գետը: Եւ յանկարծ, դատարանում յայտնվում է, որ այդ մարդիկ, չը նայելով իրանց սեփական խոստովանու-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ա Ջ Գ Ի Պ Ա Ջ Ա Պ Ա Ն Ը

(Գաւառական հերոսներ)

Կեսանքի մէջ առաջին անգամն էր նա այդպիսի գործ կատարում: Գողգոթուն ձեռքերով վերցնում էր բաժակը, մտախնամ էր հեշտաեղին, ածում էր թէ՛ լը, մի քանի անգամ բաժակի տակին ու գլխին էր նայում, էլի մտախնամ էր հեշտաեղին, մի երկու կաթիլ էր կաթիցնում բաժակի մէջ, ինքն իրան հարցնում էր թէ՛ լը. է արդեօք ածում, էլի նայում էր, ծանր ու թեթիւ անում և պատասխանում էր, որ շատ լաւ է, դեռ կէսն էլ աւել է: Լցրած բաժակները նա տուն էր ուղարկում ծառայող կնոջ ձեռքով: ամեն անգամ պատուիրելով նրան զգոյշ լինել, լաւ տանել:

Իսկ երբ թէ՛ լը վերջացաւ, իսկոյն դուրս գնաց, մի քանի անգամ էլ մտախնամ, դրան ձեռքից ակնաջ զրեց: Շատ չանցած՝ դուրս եկաւ երկտասարդը: Նրա ուրախ, ծիծաղկոտ դէմքը բոլորովին գոհացրեց Մահտեսուն, որ սկսեց փրկվել փնթալ, կատաղի հայեացքով ցոյց տուեց անկոչ հիւրին դրսի դռները և քնաց նրա ետևից, անզխաբար քարերին քսելով իր անմահ չմուշկները: Նա խօսում էր իր հետ, բայց բարձր ձայնով.

— Ա՛՛՛՛՛ չը կայ, պատկառանք չը կայ, ո՛վ է

թեան, ոչ մի սպանութիւն չեն գործել, այլ բոլորովին զուր տեղ բարձել են իրանց վրա այդպիսի ոճրագործութիւն, և անհետացած գիւղացին էլ ոչ թէ սպանվել է, այլ դաշտում սառել ցրտից և դիակը մնացել է ձիւնի տակ: Թէ՛ պատահա՞մա՞ր չը դանակը ձիւնի տակ մնացած գիւղացուն դիակը, անտարակոյս, բոլորովին անմեղ մարդիկ պէտք է ենթարկվէին տաժանակիր աշխատանքի և քաղաքացիական մահի:

Սակայն ի՞նչ է պատճառը, որ այդ մարդիկ, անմեղ լինելով հանդերձ, այդ տեսակ յանցանք էին վերցրել իրանց վրա: Մեղադրվողները մէկն ասաց. «Ես պատրաստ էի տաք այդպիսի յանցանքներ խոստովանել, միայն թէ աղափար սարսափելի ծեծից»: Ուրեմն մեղադրվողները արել էին այդպիսի սարսափելի խոստովանութիւն չը գործած յանցանքի մասին, որովհետեւ նրանց ենթարկել էին տանջանքների և ստիպել այդտեսակ խոստովանութիւն անել:

Այն այդ վարմունքը, որ միանգամայն հակառակ է դատաստանական օրէնքներին և արդարադատութեան, հրաւիրել է թէ՛ արդարադատութեան միջնորդութեան, թէ՛ մամուլի և թէ՛ հասարակութեան ուշադրութիւնը, իբրև մի շարիքի վրա, որի դէմ պէտք է անխնայ կերպով կռուել:

Թէ՛ այդ երեւոյթը բացառական լինելը և միայն տեղական և այդ տեսակ դէպքեր տեղի ունենային միայն Վեաստայի նահանգում, ապրակոյս չը կայ, որ նա չէր կարող այդպիսի յուզմունք առաջ բերել սակայն, ցաւալին այն է, որ այդ տեսակ երեւոյթներ յաճախ կրկնվում են զանազան տեղերում և, ինչպէս ցոյց են տալիս օրինակները, նախնական քննութեան ժամանակ, ծեծի և տանջանքների միջոցով խոստովանութիւն կորելու սովորական միջոց է, որ դրժնագրում են ոստիկանական օրգանները և նոյն իսկ երբեմն քննիչները:

Օրինակ, Կովկասի դատաստանական քրոնիկան լի է այդպիսի փաստերով, երբ դատարանում, դատաստանական քննութեան ժամանակ, յանկարծ վկան կամ մեղադրվող-

կանչել, ո՛վ է ետևից մարդ ուղարկել... Առանց հարցնելու, առանց ճանաչելու ներս է սլործնում... Ի՞նչ կայ այստեղ, ամօթ չէ...

Ամբողջ փողոցը զրոգաց այն անազին շտապիւնից, որով փակվեցան դռները երկտասարդի ետևից: Եւ այդ պատճառով չը կարողացաւ խնայել այն թունդ յիշոցը, որ դուրս եկաւ Մահտեսու բերանից:

Արբանակը լսեց ամենը, հասկացաւ: Նա ուղեց յետ դռնալը, պատասխանել, բայց ձեռքը թափ տուեց, յետ նայեց և ուսի վրայով մի արձանարհակալ հայեացք ուղեց դէպի երկաթապատ, հաստ դռները, որոնք արդէն պինդ փակված էին:

Երեկոյ է, մեծ փողոցի անցուղարձը վերջացել է և լուսութիւնը լայն թեքեր է տարածել գաւառական խուլ անկիւնի վրա: Մահտեսին իր տեղումն է և դիտում է ամայի փողոցը: Հասարակական լապտերը, որին նա այնքան ստուգում էր մի ժամանակ, այժմ անգնահատելի ծառայութիւն է անում նրան:

Մտածած, կեղտոտ սպակիւնների չըբայտատում հաստատված դեղին բոցը բոլորովին անհշմարելի չէ մնում, ոչ, նա ոչ ոք ունի մի չըբան լուսաւորելու և այդ չըբանը բաւական լայն է: Խաղաղ է այդ լայնը, միանման եռանդով լուսաւորում է և ոչ մի արկած չէ խանգարում նրա խաղաղ ու հեղ գործունէութիւնը: Խաղաղ է ամբողջ ընտրութիւնը. գիշերային սքանչելի զովութիւն է տարածում խաղաղ քնի գրկը մտած մարդկութեան վրա թիթեռնիկի թեքերի մեղմութեամբ հոտը ընթոյշ հողմիկը: Եւ այդ միջավայրում,

չը բացարձակապէս հերքում է իր տուած ցուցմունքները և արած խոստովանութիւնները, յայտնելով, թէ՛ նա այդ բոլորը արել է պրիստամիտերի և քննիչների ծեծից ազատվելու համար:

Օրէնքի գլխաւոր նպատակներից մէկն էլ մարդկային անձնաւորութիւնը որ և է բռնութիւնից պատսպարելն է, և ամեն մի անհատ, ով և լինի նա, աղտուական թէ՛ հասարակ գիւղացի, պէտք է վայելի օրէնքի իրակատար պաշտպանութիւնը մինչև այն րօպէն, երբ նա չէ դատապարտված որ և է յանցանքի համար: Օրէնքը այնքան միջոցներ ունի արդարութիւնը երեւան հանելու համար, որ ամենեւին հարկ չը կայ ինկվիզիցիան միջոցներ դիմել և ժողովրդի առաջ վայր գցել արդարութեան վարկը, որովհետեւ ամեն մի անարդար վճիռ, արձակած դատարանի կողմից, կարող է շատ աննպաստ դադարի տալ ժողովրդին օրէնքների արդարութեան և դատարանների անհաւատութեան մասին:

Իսկ թէ՛ ինչ հեռուանքներ կարող են արտադրել բռնի միջոցները, այդ ամենապղծացիկ կերպով ապացուցանում է Վեաստայի դատարանի օրինակը, երբ բոլորովին անմեղ մարդիկ պէտք է դատապարտվէին իբրև մարդասպաններ և ենթարկվէին սարսափելի պատիժների:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օ Ր Է Յ Օ Ր

X

Ամբողջ օրտից ուրախանալու մի փառաւոր ստիժ ունենք.—պարտներ Սուվորին և Պետրովսկի, որ մի քանի տարի արդէն իրանց օրգանների մէջ հայերի հետ հաւասար կերպով նախածու, վնասակար և վտանգաւոր էին համարում վրացիներին,—այսօր, նախանձելի պարզութեամբ յայտարարում են, որ վրացիների դէմ ոչինչ չուրեն, և խոստովանում են, որ վրաց ազգը վերին աստիճանի համակրելի, բարեմիտ և անձնուէր է կառավարութեան և Ռուսաստանին:

մթովեան մէջ հանդիստ վայելող Մահտեսին մի հիանալի ներբաշխակութիւն է կազմում, մի անվրդով անգործութիւն, որ մարմնացնում է բնութեան թմբակում մեղմ ու հոգին:

Այնքան ևս խաղաղ ու լուս րօպէները: Բայց անա լապտերի լայն չըբանում մի ինչ որ ստուեր երեաց, որ գողում է, երբում: Մահտեսին չուեց իր աքերը: Նա հանդիստ է, նա չէ շտապում. բայց նրա սիրտը զգում է, որ հասել է վճռական րօպէն: Նրա բերանը մի մեղմ շշուկ է տարածում օդի մէջ. Նարեկը խօսում է, հասկացնելով որ երկաթապատ դռների մօտ արթուն է փորձանքի ենթարկված մարդը:

Ստուերը նորից զոգաց լապտերի լայնի մէջ: Եւ վերջապէս նշմարելի դարձաւ մի մարդ, որ ձեռքում բռնած ունէր թղթեր: Մահտեսին ճանաչեց երկտասարդին և իր տեղը սյնացրեց: Այժմ լսելի էին նրա արտասանած խօսքերը. նրա հանդարտ ձայնը փողոցի մեղմութեան մէջ տարածվում է իբրև մի խորհրդաւոր, խեղդված քրթմնիկ:

«Ո՞նն և ծնունդը իւր, ո՞նն և շտապիդը իւր, ո՞նն և բիծը իւր, ո՞նն և արկածը իւր, ո՞նն և փուշը իւր, ո՞նն և արմատը իւր, ո՞նն և հատուածը իւր, ո՞նն և սրտուղը իւր, ո՞նն և նշխարը իւր, ո՞նն և ձիւղը իւր, ո՞նն և ոտքը իւր...»

Երկտասարդը նորից լայն ընկաւ լապտերի առաջ, մի երկու քայլ առաջ անցաւ. բայց նա չարժուում է անվտանգ, ինչպէս մի մարդ, որ չէ ուզում անախորժութեան հանդիպել և դիտմամբ կանդաղ է քայլում, մինչև որ անախորժութիւնը զը հեռանայ նրա ճանապարհից:

Իսկ Մահտեսին քիչ էլ բարձրացնում է ձայնը.

Կա ճշմարտութեան մի յաղթանակ է և մի փառաւոր պարտութիւն խաւարամիտ մամուլի երկու երգուեալ օրգանների համար, որոնք իրանց «հայրենասիրական պարտը» կատարելու համար, մի քանի տարի շարունակ նոյնքան կատարութեամբ և յափշտակութեամբ էին հայտնում և հաւածում վրացիներին, ինչպէս այժմ շարունակում են միայն հայերի վերաբերմամբ:

Հայ հասարակութիւնը նոյն իսկ այս րօպէիս, երբ ենթակայ է անթիւ և անվերջ զրպարտութիւնների յետադէմ մամուլի կողմից, նոյն իսկ այս րօպէիս, ստուգ ենք, մի անկեղծ, անսահման բերկրութիւն կը զգայ, տեսնելով, թէ՛ ինչպէս այդ օրգանները յետ են նահանջում, յետ են վերցնում իրանց խօսքերը, և հրապարակով «մեղայ» են գտնում:

Կը գայ ժամանակ, և այդ ժամանակը հեռու չէ, երբ այդ «մեղան» նրանք կարտասանեն և հայերի վերաբերմամբ: Նշանները արդէն երևում են: Մինչև այժմ «Новое Время», «Московскія Вѣдомости» հայտնում և վնասակար էին համարում բոլոր հայերին, առանց դատակարգի տարբերութեան. իսկ այժմ Սուվորինի օրգանը, զգալով որ դա մի աքաւոր է խոստովանում է, որ «հայ ժողովուրդը» մի բարի և համակրելի տարր է, ինչպէս առհասարակ ամեն մի ժողովուրդ, վտանգաւոր և հակակրելի է միայն... հայ ինտելիգենցիան, որը, Սուվորինի կարծիքով, վտանգաւոր ձգտումներ ունի...

Մի ժամանակ, խաւարամիտ մամուլի կարծիքով, վտանգաւոր ձգտումներ ունէր ամբողջ վրաց ազգը: Այժմ նա այլ եւ չուսի: Մի ժամանակ ամբողջ հայ ազգը ատելի էր և անբարեմիտ: Այժմ այդ էլ չը կայ: Մտնում է միայն հայ ինտելիգենցիան, իբրև վտանգաւոր և վնասակար մի տարր, և մենք անկեղծութեամբ հաւատում ենք, որ միայն մի քանի տարի է հարկաւոր, որպէս զի այդ անմիտ կասկածն էլ վատառի և վերջնական մոռացութեան արվին այն բոլոր բարբառանքները, որոնք այժմ միայն մի նպատակ ունեն,—զրգուել պետութեան մէջ ասլորդ փոքրիկ ազգերին միմեանց դէմ, և զրա

«Ո՞նն և շանթը իւր, ո՞նն և հրդեհածուքը իւր, ո՞նն և սրտակտանքը իւր, ո՞նն և վիճը իւր, ո՞նն և անպուշտը իւր, ո՞նն և բորբոքումը իւր, ո՞նն և ամպրոպը իւր, ո՞նն և կալակը իւր...»

Արբանակը յետ դարձաւ և աղօթքի ձայն էլ նուազեց, առաջվայ խուլ միմունջը դարձաւ: Բայց երկտասարդը միտը չուրի բոլորովին հեռանալու տուն գնաց: Նա վրդովված է, տեսնելով այդ խոչընդոտը, որ այնպիսի քաղցրութեամբ, այնպիսի սիրուն յոյներով սկսած գործն է վերջացնում: Նա կանգ առաւ: Ի՞նչ անել: Աներկիւղ առաջ գնալ, մտնել, սկսել գործը... Բայց դրա համար հարկաւոր է մի ընդհարումն զոների մօտ նստած ձեռ պահապանի հետ կարող էր նա համոզել այդ պահապանին.—Ո՞չ, դա երկար պատմութիւն կը լինի: Համոզել... քանիտին է նա կարողացել համոզել մարդկանց մէջ, որոնք այժմ պատրաստվում են քնել՝ ստաւտեան նորից նոյնքան ստուած, անտարբեր վերկենալու համար... Վճռական գործ, պահանջ... Այդ էլ անհնարին է. նա ուսուցիչ է, նա գործուում է ամբողջ հասարակութեան իշխանութեան տակ, համեստութեամբ, խանարութեամբ,—ա՜հ թէ ինչ է ամենից ստալ պահանջվում նրանից: Թեք է այդ պահանջի վրա... Հեշտ է, բայց այնուհետև գործը ինքն իրան կը խորտակվի: Եւ բացի դրանից չի կրնայ... նա ինքն էր որ խոչընդում էր երկտասարդին զգոյշ վարվել ձեռի հետ: Ո՞չ, կոխը այդ արգելքի դէմ ներսից պիտի լինի, տան միջից: Նիհոս կարող է պատուել այդ շղթան և դուրս գալ: Պէտք է նրան իմաց տալ:

Եւ երկտասարդը վճռեց սպասել, մինչև որ



կի առաջիկայ համարներից մէկում ստացրել հետեւեալը:

Այստեղի կեղծեցու երէցիտիանական ընտրութեան յաջորդ շարքերը, երբ լուսարար-տիրացուն երէցիտիանական հաշուեմատները չըլեցնում էր փողոցներում՝ վաւերացման ստորագրութիւններ հաւաքելու, այդ ժամանակ հետաքրքրուեցին իմ կրթամարտիկները՝ յուլիս և օգոստոս ամիսներում երկու մկրտութեան համար իմ առած լուսագրի հաշուով, ու զարմացայ, երբ ոչ մէկը մատենում չը գտայ: Լսելով այդ մասին գործակալ քանանան, հետեւեալ շարքերը քարոզի մէջ յայտնեց թէ՛ շեղել են զէպրեր, որ մի քանի լուսագրեր պատահաբար չեն մտել մատենա: Հետաքրքիր էր իմանալ, քանի այգայիսի պատահաբար է տեղի ունեցել երէցիտիանի պաշտօնավարութեան ժամանակամիջոցում, վեց տարվայ ընթացքում:

Արտաշէս Գարագաշեան

ՆՅԻՔԻՆ ԼՈՒՌԻՆ

Կիրակի օր, փետրվարի 18-ին, կատարվեց Թիֆլիսի երրորդ կատարական գիմնազիալի տարեկան ակտը: Հանդիսին ներկայ էին հոգաբարձու Եսայիայի, գանազան պաշտօնական անձինք և աշակերտների ծնողների մեծ բազմություն: Գիմնազիալի աշակերտներից կազմած երգչիկ և երաժշտական խմբերը՝ հանդիսի ժամանակ երգեցին մի քանի երգեր և մեծ աջողություններ կատարեցին մի քանի երաժշտական կտորներ գանազան օպերաներից: Գիմնազիալի դիրեկտոր Մարտինովսկի կարգաց մի ընդարձակ տեղեկագիր, մանկավարժական ժողովի գործունէութեան մասին 1894—95 ուսումնական տարվայ ընթացքում: Այդ տեղեկագրի մէջ նա մի առ մի թւեց այն բոլոր միջոցները, որ ժողովը գործադրել է աշակերտների ֆիզիկական, բարոյական, մտաւոր, կրօնական և էսթետիկական զարգացման գործը առաջ տանելու համար: Այդ միջոցների շարքում ուշադրութեան արժանի են մանաւանդ երկուսը: Առաջին՝ ի նկատի ունենալով, որ աշակերտները պատկանում են գանազան դաստիարակներին, հետեւաբար այն արթնքը, որ սահմանված է ուղղափառ դաստիարակեան պահպանող աշակերտների համար, չէ կարող կրօնական բուն զգացումներ ներշնչել բոլոր աշակերտներին, մանկավարժական ժողովը ընտրել է այնպիսի արթնքներ առաւօտեան և երեկոյեան համար, որոնք կարողանան բաւարարութիւն տալ բոլոր դաստիարակներին, նոյն իսկ մասնատակաւ աշակերտներ կրօնական պահանջներին: Երկրորդ՝ ի նկատի ունենալով, որ ստարաբարձացի աշակերտները ստրուկ են գանազան մասնատար անձանց մօտ, որոնք ղեկավարվում են միայն շահախորհրդային տեսակետով և մասնատար տնրերի մէջ վարած կեանքը իրատ անբարոյականացուցիչ աղղեցություն է գործում նրանց վրա, գիմնազիալի իշխանութիւնը բացել է պանսիօն 25 աշակերտի համար, որոնք տարեկան 180 ռուբլի վճարով, ամեն յարմարութիւն, լաւ քնակարան և սնունդ են ստանում: Ուսուցիչ կուսակցի կարգացած հաշուից երկուսը, որ գիմնազիալի աշակերտների թիւն եղել է 419: Ըստ ազգութեան՝ նրանք դասաւորված են հետեւեալ կերպով: 1) ռուսները—260/0, վրացիները—90/0, հայերը—570/0, հրէաները—40/0, թուրքերը—0,20/0, և ուրիշ ազգութիւններ—40/0: Իր բացման օրից մինչև հաշուետարին, գիմնազիան ստացել է գանազանից 197.000 ռուբլի և ուսման վճար աշակերտներին—122.000 ռուբլի:

Մեկ հարգողում են, որ հայոց զերտաններէն մէկը գրել է մի կօմիզիա, Թիֆլիսի կեանքից, և այս օրերս պէտք է ներկայացնի ցենզուրական կոմիտեային, ներկայացման թույլտուութիւն ստանալու համար:

«Մուրճի» մէջ կարգում ենք. «Արթիւր Արփարեան, տաճկահայոց կորովի հրատարակաւորը, «Հայերէն» լրագրի գլխավոր նկատմանը, ղեկավարների 25-ին ենթարկվեց սպանութեան անաջող փորձի: Այդ լուրը յունվարի սկզբները կ. Պօլսի մեր թղթակցից առնելով՝ մենք փութացինք մեր թղթակցին խնդրել բերանացի կերպով պ. Արփարեանին մեր ցտակցութիւնը և միաժամանակ մեր խորին սրտմտութիւնը արտայայտել կատարված անիրաւութեան համար:»

«Մուրճի» մէջ կարգում ենք. «Արթիւր Արփարեան, տաճկահայոց կորովի հրատարակաւորը, «Հայերէն» լրագրի գլխավոր նկատմանը, ղեկավարների 25-ին ենթարկվեց սպանութեան անաջող փորձի: Այդ լուրը յունվարի սկզբները կ. Պօլսի մեր թղթակցից առնելով՝ մենք փութացինք մեր թղթակցին խնդրել բերանացի կերպով պ. Արփարեանին մեր ցտակցութիւնը և միաժամանակ մեր խորին սրտմտութիւնը արտայայտել կատարված անիրաւութեան համար:»

«Новое Время» լրագրի էջերում (3 փետրվարի) Թիֆլիսի թեմի հայոց զարգացման տեսուչ քահանայ Մեղեան զարձեղ է պարուն Մանուէլեանի Այդ առիթով հարկաւոր ենք համարում նկատել Պետերբուրգի լրագրին, որ հայոց զարգացման թեմական տեսուչները բոլորն էլ հողերակաւորներ են, և 1885 թ-ից յետոյ այլ ևս այդ պաշտօնի մէջ ոչ մի աշխարհական մարդ չէ նշանակվում:

Փետրվարի 18-ի հայոց ներկայացումը գրաւել էր բաւական հասարակութիւն: Հասարակութեան մի նշանակաւոր մասը, տարաբարձաբար, ինչպէս հաւատացնում են, ձրի յաճախողներ են, մի սովորութիւն, որ փաստաւոր կերպով զարգանում է միմիայն հայոց թատրոնում: Ներկայացրին Գօլգօթի «Գօն-Գրիգորի» ծիծաղաշարժ կատակերգութիւնը, որի գլխավոր դերերը՝ Վրոյր և Ստեփանեան վտա չը կատարեցին: Կօմիկ Տէր-Գաթիկեան իր փորձիկ դերում շատ լաւ էր: Զարաբարձաբար նոյնը չենք կարող ասել միւս խաղացողների մասին: Այդ երեկոյեան ներկայացման մասնակցում էր նոր դերասան Օսանեան: Զարմանում ենք, թէ ինչու դերասանը առաջին անգամ բեմ դուրս գալով՝ չէր վերցրել որ և է պատասխանատու, իր ամպլուալին յարմար դեր: Օսանեան կատարեց «Խեղաբար» երգեցողութեամբ, որը, պէտք է խոստովանել, նրան աջողվեց: Սակայն «Խեղաբար» անգարութիւնը շատ թուլացած վերջին երգի շնորհիւ, որ դերասանը ինքն իր երգեց շատ անաջող: Շատ ուրախ կը լինեմք, եթէ երիտասարդ Օսանեան աջողութիւն ունենար մեր բեմի վրա, որովհետև մեր թատրոնը անպակաս կարօտութիւն ունի նոր ուժերի, քանի որ հերթից շատերը, իրանց ուղիղ առաջադիմութիւն չը գործող խաղով բարորդին ձանձրացրել են հասարակութիւնը:

Վերջերս ստեղծի և մանուֆակտուրի ղէպարտամէնտը յաճախ գանազաններ են մտնում թէ անմիջապէս արտասահմանեան առևտրական ֆիրմաներից և թէ՛ հիւպատոսներից մեր վաճառականների անբարեխղճութեան ղէմ՝ արտասահմանեան չուկաների հետ յարաբերութիւններ ունեցած ժամանակ: Ի նկատի առնելով այդ հանգամանքը, դեպքատանտը միջոցներ է որոնում՝ վերջ առաւ անբարեխղճութեանը և կեղծումներին առևտրի մէջ, որոնց պատճառով մեր արարները դուրս են մղվում արտասահմանեան չուկաներից: Բայց՝ այդիցիական միջոցներից, որոնց նպատակն է բռնել սահմանի վրա կեղծած արարները, նախադիմում է, ինչպէս լսել են Պետերբուրգի լրագրիները, աւելացնել պատիժը ամեն մի անբարեխղճութեան համար առևտրի մէջ: Մինչև անգամ հարց է յարուցված հրատարակել ընդհանուր տեղեկութեան համար անբարեխղճ կեղծումներ արող վաճառականների անունները և ազգանունները:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլսից մեզ գրում են, փետրվարի 5-ից. «Ազգութեան պատրիարք յամակ մը գրելով իւր միջոցով պատրիարքին յայտարարեց, թէ ինք բնաւ հորհրակաւորութեան ուղեքձ տուած չէ իւր արդի պալատը, թէ բոլորովին սուտ են այս մասին «Մոնիթօրի» հրատարակած տեղեկութիւնները, և թէ Պօլսից բոլոր թերթերուն զըրկած հեղքմտագիրները թող ձգած չեն հրատարակելու և թէ Հայաստանի մէջ տեղի ունեցած անցքերը ամենքն ալ իրեն ծանօթ են: Ազգութեանին նամակը վերին աստիճանի ուրախութիւն պատճառած է պատրիարքարանին և առհասարակ հայ շրջանակներուն:»

Ռուսաց գործակալութիւնը արդէն հարգողեց Չէյթունի հաշտութեան պայմանները: Ահա զրա մանրամասնութիւնները, որ մեզ հարգողում են Վիէնայից. «Հայաստանի պայմանները հետեւեալներն են. 1) Ընդհանուր ներքու. 2) Չէյթուն պիտի ունենայ, ընդունված ընթացիկների հիման վրա, քրիստոնէայ կառավարիչ և տեղական միջոցի, որը, ի հարկէ, պիտի բաղկանայ քաղաքի հայերից. 3) Շարժումին զուրկ կանգնող ուշաեզայի ան-

ձերը պիտի չը յանձնվեն, այլ միայն պիտի արտրվեն հիւպատոսների հսկողութեան տակ. 4) Չէյթուն ապաստանողները, որ կը հաշուեն 13.000 հոգիի շարի, պիտի վերադառնան իրանց տեղերը և կառավարութիւնը հանդիսաւոր խոստումով պիտի տայ նոցա ոչ անձին և ոչ ինչքին զիւրջելու. 5) Հայերը իրանց գրաւած պատերազմական զէնքերը պիտի յանձնեն թիւրք կառավարութեան. նոյն բանը պիտի անեն սակայն նաև զրացի մասնատակաւոր դիւղերը, որք կառավարութեան գիտակցութեամբ կամ անգիտակցութեամբ տէր են պատերազմական զէնքերի: Թէ քրիստոնէաները և թէ մասնատակաւորները միայն որսորդական զէնք կրելու ազատ պիտի լինին:

«Մի շատ կարևոր կէտ սակայն մտի է, այսինքն թէ արեւօք քանդված զօրանոցը պիտի վերաշինվի և թիւրք զօրքերը կրկին անգամ պիտի մտնեն քաղաքը և կամ թէ Չէյթուն պիտի վերստանայ իր նախկին կէտ-անկախ վիճակը՝ միանգամ ընդ միշտ հեռացնելով իր հողից թիւրքաց զինուորական ուժը: Նաև հարկի մի հարց կայ, որ զիստ կատարելապէս կտրագրված չէ թվում: Որքան յայտնի է, զէյթունցիները կուզեն վեց տարի ժամանակով զինիլ և այլ հարկերից ազատ լինել:»

Կ. Պօլսում պաշտօնապէս յայտարարված է, որ մի քանի ամիս առաջ Շաքիր-Փաշային իրբու օգնական նշանակված քրիստոնէայ Ֆէտի-բէյ յետ է կանչվել պաշտօնից և նրա տեղ նշանակվել է յայն Մարթիօրդաանօ էֆէնդին: Այդ «Berliner Tageblatt» հարցողում է, որ Ֆէտի-բէյ ամենին դուրս չէ եկել կ. Պօլսից այն պատճառով, որ նա պահանջում էր Բ. Դոնից իրան ուժիկ նշանակել ամսական 15.000 և ոչ 10.000 դրու, և որովհետև որ և է համաձայնութիւն չը կայացաւ, իսկ պետութիւնները սկսեցին հարց տալ Բ. Դրան, թէ ինչու չէ նշանակվում Անաստիայի համար քրիստոնէայ պատուիրակ, ինչպէս խոստացված է, կառավարութիւնը շտապեց ուղարկել յայն Մարթիօրդաանօյին:

Կ. Պօլսից հեռագրում են Լոնդոնի «Daily Chronicle» լրագրին, թէ այն օրից, երբ Լորդ Սոլսբերի յայտնի կերպով մերժեց հայերին իր օգնութիւնը, կ. Պօլսի արժանաւոր դեսպանի հրաժարականը միայն ժամանակի խնդիր դարձաւ:

ՄՈՒՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռուսաց գործակալութեան հեռագիրներէն արդէն յայտնի է, որ օսմանեան հանրային պարտքի կօմիսար Մուրադ-բէյ, որը մի քանի ամիս առաջ վախաւ կ. Պօլսից, թիւրքաց իշխանութեան դատարանի կողմից դատապարտվել է մահվան in contumace:

Մուրադ-բէյ սպասում է գտել Ալիպտոսում և կարող թաղաքում, սկսել է հրատարակել մի արաբական լրագիր «Միզան» (կիւն) անունով: Այդ թերթը շատ տարածված է և, ինչպէս հարգողում են լրագիրները, տարվում է 40.000 օրինակ. նրա գլխավոր նպատակն է ընդհանրացնել այն միտքը, թէ սուլթանը իսլամի խալիֆան չէ, և թէ պէտք է Արաբիայում նոր խալիֆա ընտրել, որ միտքը, որին համակիր են նոյն իսկ շատ ուղեւորներ և չէյթներ:

Տեսնելով, որ Մուրադ-բէյի լրագիրը և քարոզած գաղափարները կարող են յուզել մուսուլմաններին մտքերը, թիւրքաց կառավարութիւնը կ. Պօլսի «Իզդամ» պաշտօնական լրագրի մէջ հետեւեալ հեղքում է սպազրել սուրբ: «Անդամ Մուրադը» վերնագրով:

Ահա այդ հեղքումը. «Մուրադ-բէյ, գրեթէ տկուր գալով կ. Պօլսի և սպրելով վաշտներին աներում, Մուրադը ընդունվեց մայրաքաղաքի զարգացման մէկում և սովորեց թիւրքաց լեզուն: Զետոյ նա վարում էր մի պարսպ կեանք գրասենականերում և ուրիշ տեղերում, երբ կայսերական զըթութեան հորհով նշանակվեց պատմութեան ուսուցիչ Մուրադի զարգում: Նա մտածում էր միայն խոսովութիւն սերմանել աշակերտների մտքերի մէջ իր ինքնուրույնացմանը: Կրօնի և հաւատարմի նպատակութեան պարտաւորութիւնների ղէմ: Նա նոյնպէս աջողութիւն չը գտաւ իր լրագրական ասպարիզում, հրատարակելով «Միզան» օրագիրը: Ապրելով թշուառութեան

մէջ, նա մեծ բարիքներ տեսաւ վեհապետից և նշանակվեց օսմանեան հանրային պարտքի կօմիսար ամսական 120 լիւրա ուժիկով: Բայց այդ բոլոր բարեբարութիւնները վախարէն նա սպեւրախտութեամբ վճարեց իր սպականված բնութեան պատճառով: Հռչակ ստանալու մարդը, նա փախաւ արտասահման: Նախ իր բնակութիւնը հաստատեց Պարիզ, որտեղ սկսեց կայսերական կառավարութեան ղէմ մեքենայութիւններ սարքել. յետոյ անցաւ Եգիպտոս, որտեղ վերսկսեց «Միզանի» հրատարակութիւնը: Նրա մասին կատարված ընտրութիւնը ցոյց տուեց, որ Մուրադը այստեղից փախելուց առաջ աշխատել էր գրգռել մի քանի հասարակ մուսուլմաններին՝ խռովութիւններ յարուցանելու նպատակով: Նրա գործերը ձանաչվել են դատարանի կողմից իբրև ոճրագործութիւններ, ուստի և Մուրադը այժմ համարվում է իբրև մի քրէական վախատակաւ:

«Այժմ, երբ կարգը վերահաստատված է կայսրութեան մէջ և օտար զրգուհները դադարել են, այդ անիծեալ մարդը շարունակում է էլի խռովութիւններ յարուցանել և օտար պետութիւններին միջամտութիւնը խնդրել: Պարիզում գրած իր մի բողոքի մէջ նա պահանջում է, որ մեծ-վեղիբը նշանակվի կամ ինքու կողմից դեսպանների համաձայնութեամբ և վազուֆների կապերը, որոնք մուսուլմանների սեփականութիւնն են, օտար վարչութեան ենթարկվեն: Այժմ, «Միզանում» նա սկսել է յարձակվել նոյն իսկ խալիֆայութեան ղէմ: Այդ լրագրի վրա որ և է ուշադրութիւն չը պէտք է դարձնել: Մուրադի վարձուները սրագր ցոյց է տալիս, որ նա էլ մասն ունի այն սուրբիդիաներից, որոնք մի քանի օտար կառավարութիւններ վճարում են մամուլի մի քանի օրգաններին՝ յարձակվելու համար իսլամական կրօնի վրա և ինտելու օսմանեան շահերին: Այդ շարագուշակ մարդը այժմ առաջարկում է Թիւրքիայի գործերի կառավարութիւնը յանձնել այն մի և նոյն մարդկանց, որոնց վրա առաջ յարձակված է «Միզանի» մէջ, Պօլսում հրատարակած ժամանակ: Նա յաւակնութիւն ունի յայտնելու, թէ երբ կ. Պօլսում էր գտնվում, ներկայացրել է նորին վեհապետութեան սուլթանին մի քանի զոկումներներ կամ քաղաքական ծրագիրներ: Բայց այդ ոչինչ չէ նշանակում: Վեհապետը երբեք չէ մերժում քաղաքականութեան վերաբերեալ գրութիւններ, և Մուրադը էլ շատ կարելի է ներկայացրել է այդ տեսակ ծրագիրներ, ինչպէս նա ներկայացրել է վեհապետին բազմակի: կայսերական բարիքներ հայոց խնդրագիրներ:

«Թող Մուրադը և նրա հետեւող շարագործները լաւ իմանան, որ անկարող են խախտել իսլամ ժողովրդի ղէպի խալիֆայութիւնը ունեցած սըրտագին համակրութիւնը: Բոլոր օսմանցիները հորհակալ են Աստուծոյ, որ խալիֆայութեան վեհ պաշտօնը վարում է մի իմաստուն, ինտելիգէնտ և կրօնասէր վեհապետ: Աստուծո օգնութեամբ և խալիֆայի ջանքերով երկիրը կը մտնի կարգի և խաղաղութեան մէջ և կը բարգաւաճի: Մենք կարօտ չենք Մուրադի պէս մարդկանց վտանգաւոր խորհուրդներին: Եթէ Մուրադը պարկեշտ մարդ է, թող նա ներկայանայ քրէական դատարանի առաջ, որ չնրան կանչում է և պաշտպանի իր պատիւը, եթէ միայն ունի պատիւ:»

ԵՂԻՊՏՈՍ

«Times» լրագրի հարցողած այն լուրը, թէ սուլթանը այս օրերս իր նկարագրը Անգլիային Եգիպտոսի վրա իր ունեցած սիրովերեսային իրաւունքների մասին, հերքում է «Ելյալի» գործակալութիւնը: Այդ լուրը, սակայն, այն հետեւեալն ունեցաւ, որ արտասահմանեան մամուլը կրկին սկսեց դատաւել եգիպտական հարցով: Արտասահմանեան շատ լրագիրներ, ի միջի այլոց, նկատում են, որ սուլթանը ղօքոս է այն սիտեմատիական յարձակումներից, որոնց ենթարկվում է թէ ինքը և թէ իր պետութիւնը: Անգլիայի կողմից Անգլիացիները ամեն կերպ աշխատում են սպասամբնեցնել սուլթանի ղէմ մակեդոնցիներին, կրետացիներին, հայերին, զրուզներին, իսկ այժմ, ըստ երեկոյին, խրախուսում են Երիտասարդ Թիւրքիայ կուսակցութեան ազդեցականութիւնը: Այդ կուսակցութիւնը իր կենտրոնը հաստատել է Եգիպտոսում, որը իրապէս Անգլիայի

